

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-13-Ը ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Հակոբ Վարդանյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տարարծքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի), 2020թ. հունվարի 10-13-ը:

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Հրավերն ստացվել է Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության (International Renewable Energy Agency) գլխավոր տնօրեն Ֆրանչեսկո Լա Կամերայի կողմից:

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՐ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).

Մասնակցել Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության (IRENA) ասամբլեայի 10-րդ նստաշրջանին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Քննարկվել են էներգիայի փոխակերպման աշխարհաքաղաքականությունը, էներգախնայողության սոցիալ-տնտեսական օգուտները, հիդրոէներգետիկայի դերը էներգետիկ բնագավառի փոխակերպման մեջ թեմաները, տեղի է ունեցել նախարարական կլոր-սեղան քննարկում, ներկայացվել է IRENA-ի 2020թ. աշխատանքների կազմակերպական հարցերը և վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության գլխավոր տնօրենի տարեկան զեկույցը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հիմնական ելույթները առնչվում էին վերականգնվող էներգետիկայի բնագավառում նորագույն տեխնոլոգիաների զարգացումներին, մարտահրավերներին, զարգացման խոչընդոտներին: Ընդգծվեց կայուն զարգացման վրա վերականգնվող էներգետիկայի ազդեցությունը և դերը, ինչպես

նաև տարբեր երկրների տեխնոլոգիական նորարարությունների ոլորտում լավագույն փորձը կիսելու և ընդհանուր կարիքներն ու առաջնահերթությունները բացահայտելու կարևորությունը:

Հանդիպումներ են տեղի ունեցել ՎՋԵԲ ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվել է Հայաստան-ՎՋԵԲ երկկողմ համագործակցության հաջող ընթացքը, ինչպես նաև հանդիպել են ԱՄԷ Շրջակա միջավայրի նախարար Թանի Բին Ահմեդ Ալ Ջեյուդիի հետ և քննարկել ենք երկու ոլորտների կապի և միմյանց նկատմամբ ազդեցության մասին հարցերը: Մասնավորապես նշվել է, որ վերականգնվող էներգիայի արտադրությունը հիմնականում դրական երկարաժամկետ ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա, քանի որ այն կրճատում է հանածո վառելիքի վրա հիմնված էներգաարտադրությունը՝ դրանով իսկ կրճատելով ջերմոցային գազերի արտանետումները: Վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաները նաև կարող են կրճատել ջրի սպառումը, ջերմային աղտոտումը և թափոնները:

Նիստի ընթացքում ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների էներգետիկայի բնագավառում իրականացվող մի շարք ծրագրերը և զեկուցվել է կատարված մասին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ
Ընդունվել են որոշումներ օրակարգով նախատեսված հարցերի վերաբերյալ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տասներորդ ժողովի ավարտին որոշվեց կրկնապատկել վերականգնվող էներգետիկայի մասնաբաժինը առաջիկա «Գործողությունների տասնամյակում»՝ էներգիայի անցման նպատակներին հասնելու համար:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

15/07/2020